ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ[1] (1919 թ. հունիս)

Հրանտ Աբրահամյան

Բանալի բառեր՝ Արցախ, գնդակոծում, գործակից, ներխուժել, պատգամավոր, համագումար, շրջափակում, զորահրամանատար, ճզմել, վկայություն, արտաքսել:

1919 թ. հունիսին Արցախում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին անդրադարձել են մի շարք հեղինակներ: Սակայն որոշ հարցերի հիմնավորված պարզաբանում դուրս է մնացել նրանց ուշադրությունից: Մեր կողմից կատարված նոր ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռնեց նորովի անդրադառնալու այդ հարցը:

Աբրամ Կիսիբեկյանը իր հուշերում գրել է. «Հինգերորդ համագումարից մի ամիս հետո, այն է 1919 թ. հունիսի սկզբներին, անգլիական միսիայի համաձայնությամբ և նահանգապետ Խոսրով-բեկ Սուլթանովի կարգադրությամբ սկսվեց քաղաքի հայկական մասի գնդակոծումը, որը շարունակվեց մի ամբողջ օր» [1]:

Հարց է առաջանում. ի՞նչու Արցախը և նրա կենտրոն Շուշին 1919 թ. հունիսին անասելի գեհեն ապրեցին: Բանը հետևյալն է. 1918 թ. աշնան վերջին առաջին աշխարհամարտի մասնակից Անտանտայի ռազմական ուժերը՝ անգլիացի գեներալ Վ. Թոմսոնի հրամանատարությամբ, էնզելից ներխուժելով Բաքու, զորամասեր են ուղարկում՝ Արցախն ու Զանգեզուրը գրավելու և Ադրբեջանին ենթարկելու համար: Այդ նույն գեն. Թոմսոնի համաձայնությամբ ստեղծվում է Արցախ-Զանգեզուրի նահանգապետություն, որի գլուխ է կարգվում մուսավաթ կուսակցության մոլի նվիրյալ, ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ Խոսրով բեկ Սուլթանովը, որին Արցախ-Զանգեզուրը չի ընդունում: Այդ տաճկամոլ քրդին մերժում է նաև 1919 թ. փետրվարին տեղի ունեցած արցախահայության չորրորդ համագումարը: Արցախ ներխուժած անգլիական գաղութարարների հրամանատարության պահանջով 1919 թ. ապրիլին տեղի է ունենում արցախահայության 5-րդ համագումարը, որին ներկա էին մեկ ամիս առաջ Թոմսոնին փոխարինած գնդապետ, մեկ ամիս անց Շատելվորտը և նահանգապետ Սուլթանովը: Համագումարը պետք է վճռեր Արցախը Ադրբեջանին ենթարկելու հարցը: Շատելվորտը համագումարում արտասանած իր ճառում պնդում է, թե անգլիական հրամանատարության որոշումով Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը մինչև Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների սահմանները կորոշի Փարիզի վեհաժողովը: Այդ լպիրշ հայտարարությունը համագումարի պատգամավորներին հանել էր համբերությունից: Նրանք, պաշտպանելով և հավատարիմ մնալով չորրորդ համագումարի ընդունած որոշմանը, նահանջելու ոչ մի միտում չունեին: Շատելվորտի բոլոր

---

[1] Հոդվածն ընդունվել է 08.12.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

ջանքերը՝ թե համագումարում արտասանած ճառում և թե մայիսի սկզբին Թիֆլիս՝ մարտի կեսից այնտեղ տեղափոխված գեներալ Թոմսոնին ուղարկած իր զեկուցագրում [2]: Ճիգեր է գործադրել անցկացնելու անգլիական տեսակետը: Սակայն արցախահայության ներկայացուցիչները մնում են անդրդվելի: Նրանք այսպես են պատասխանում Շատելվորտին. ,Ադրբեջանը միշտ աջակից ու գործակից է եղել Տաճկաստանի կողմից ընդհանրապես հայերի և մասնավորապես Ղարաբաղի հայության դեմ ուղղված գազանություններին, որպիսին մնում է այժմ…ե:

Ակնհայտ է, որ թուրքերին Անդրկովկաս էր հրավիրել Ադրբեջանը և նրանց համոզել ներխուժել Ղարաբաղ: Համագումարը, ելնելով դրանից, իր ապրիլի 23-ի նիստում «անհնարին է համարում ընդունել Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ իշխանության վարչական ձև», իսկ ապրիլի 24-ի նիստում դիվանի ամբողջ կազմի և 48 պատգամավորների ստորագրությամբ ընդունված բանաձևում վճռականորեն շեշտված է. ,Համագումարը անընդունելի է համարում Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ վարչական ծրագիրե[3]: Կատաղած Շատելվորտը ազերի թուրքերին հուշում է՝ հայերի ,ճանապարհները փակել, տնտեսական բոյկոտ հայտարարել, հարձակվել…ե նրանց վրա[4]: Եվ այդ ամենը չուշացավ:

Շատելվորտը մեկնում է Զանգեզուր և փորձում հնազանդեցնել սյունեցիներին ու նրանց ստիպել ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Սակայն կրելով խայտառակ պարտություն՝ վերադառնում է և Գորիսից ետ կանչում անգլիական միսիան: Նա մայիսի կեսին Արցախից արտաքսում է Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ փոխգնդապետ Միշա Արզումանյանին և նրա օգնականներ Գագո Տեր-Օհանյանին ու Ռուբեն Կասումյանին:

Այդ ժամանակ Արցախն ու Զանգեզուրը գտնվում էին սովի մեջ: Մարդկային զոհեր էին խլում նաև վարակիչ հիվանդությունները: Մայիսի կեսին թուրքերը բոյկոտ են հայտարարում արցախահայությանը: Հայերը զրկվում են դաշտային աշխատանք կատարելու հնարավորությունից: Արցախահայությանը մեծ վնաս էր հասցնում նաև սար բարձրացող քոչը: Փակվել էին Եվլախ-Աղդամ-Շուշի, Շուշի-Գորիս ճանապարհները: Մի խոսքով՝ երկրամասի վիճակը չափազանց ծանր էր: Ադրբեջանի իշխանությունների, մանավանդ նահանգապետ Սուլթանովի՝ Արցախում իրագործվող այդ քաղաքականությունը, աջակցություն էր գտնում անգլիական հրամանատարության կողմից: Արցախը, մանավանդ նրա կենտրոն Շուշին, պահվում էր օղակման մեջ: Անգլիացիների համաձայնությամբ վերացվում է քաղաքի հայկական և թուրքական թաղամասերի միջև գոյություն ունեցած դիրքապահությունը՝ իբրև հսկողությունը պետք է իրագործեն Հնդկաստանից բերված սիպայիները: Անգլիացիները Շուշի էին բերել մի ջոկատ, մնացած զորամասերը կենտրոնացրել էին Աղդամում:

Այս ամենը նախապատրաստական միջոցներ էին Արցախը գեհենի մեջ նետելու համար: Հայ հեղինակները այդ մասին ակնարկելով, այնուամենայնիվ, թույլ են տվել անճշտություններ: Օրինակ, Հարություն Թումյանը «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ.» ուսումնասիրության 225-րդ էջում գրել է, որ 1919 թ. հունիսի 4-ին Սուլթանովի հրամանով և անգլիական միսիայի գլխավոր մայոր Մոնկ-Մեզոնի գլխավորությամբ և համաձայնությամբ Շուշիում սկսվել էր հրաձգություն, հարկ եղավ այդ մասին շտապ տեղյակ պահել երկրամասի գավառների հրամանատարներին: Եվ ապա՝ «Ասլանիկի (Մսմնայի հերոսի) միջոցով, որ Դիզակից եկել էր տեղեկություններ տանելու քաղաքի անցուդարձների մասին, նամակ ուղարկվեց Լալայանին[5] շտապ հավաքելու Դիզակի և Վարանդայի ընտիր մարտիկներից մինչև 2000 մարդ եւ ամեն կերպ աշխատել հունիսի 5-ի գիշերը մտնել քաղաք: Գործակալության պլանը մանրամասնո-

րեն հայտնվեց Ասլանիկին՝ բանավոր տեղեկացնելու համար»[6]: Մենք համաձայն չենք հեղինակի հետ, քանի որ նրա այդ գրածը չի համապատասխանում իրականությանը: Այդ օրերին Ասլանիկը կենդանի չէր, նա հայրենի Կեմրակուճ գյուղի մոտ մայիսի 18-ին զոհվել էր ահաբեկիչների կողմից [7]:

Կամ ուրիշ օրինակ. Աբրամ Կիսիբեկյանը իր վերոհիշյալ գրքում գրում է, որ 1919 թ. հունիսի 5-ին Ղայբալիշենում տեղի բնակիչների նկատմամբ Սուլթանովի բանդաները ցեղասպանություն էին սարքել: Ահա այդ ժամանակ ,Կուսանաց անապատի (վանքի) բակում Եղիշե Իշխանյանը, զինելով մի խումբ երիտասարդների, Չիտչյան Ասատուրի առաջնորդությամբ ուղարկեց ղայբալիշենցիներին օգնության[8]: Սա թյուրիմացություն է, որովհետև գեն. Շատելվորտի հրամանով հունիսի 5-ի վաղ առավոտյան Եղիշե Իշխանյանին, Հարություն Թումյանին և Ասատուր Ավետիսյանին արտաքսել էին Շուշիից և անգլիական ավտոմեքենաներով նրանց տանում էին Թիֆլիս[9]:

Նման օրինակներ կարելի է էլի բերել: Հարց է առաջանում. ինչու՞ անգլիական այդ ոհմակը և ադրբեջանական բարբարոսները մեծագույն ոճրագործություն կատարեցին Շուշիից չորս վեստ հեռավորության վրա գտնվող, մի քանի ամիս առաջ զինաթափված մի գյուղում, որի 700 հայ բնակիչներից ամենավայրագ ձևով սրի մատնվեցին 512-ը: Դա, պարզապես, ցեղասպանություն էր, որի հիմնական մեղավորներ Սուլթանովն ու գեն. Շատելվորտը պատասխանատվության չենթարկվեցին:

Անգլիական հրամանատարության Արցախում վարած քաղաքականությունը հակաազգային էր և Ադրբեջանի թուրք իշխանություններից ստացած կաշառքի հատուցում: Եվ պատահական չէ, որ հայ հեղինակներ Լեոն, Հարություն Թումյանը, Աբրամ Կիսիբեկյանը, Բագրատ Ուլուբաբյանը և ուրիշներ հատուկ ընդգծել են այդ մասին: Լեոի բնորոշմամբ՝ «Հայության արյունարբու թշնամի, արևախում տուլթանիզմի ամենակույր գործակալներից մեկը, նա հայտնի էր ամենքին իբրև մի տիպ, որին չէր կարելի վստահել այդպիսի մի պաշտոն այնպիսի մի տեղում, ուր հայեր էին ապրում»: Եվ ահա «անգլիական «բուխգալտերը» Բաքվում «մուսավաթի» հետ արդեն սակարկություններ էր սկսել Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին ծախելու մասին»: «Մուսավաթը» Ղարաբաղի ընդհանուր նահանգապետ նշանակեց մի քրդի՝ Սուլթանովին, որ, ի դժբախտություն հումանիտար գիտությունների, բժիշկ էր՝ համալսարանական դիպլոմովե, որը հատնի էր որպես դահիճ: Նա «Քրդական գյուղերից հավաքած վայրենի ձիավորներին ուղարկեց Շուշիի հյուսիսային կողմում գտնվող ձորը, ուր այրեցին ու կոտորեցին հինգ հայ գյուղերե, ուր դահիճ «քաջերը» գազանաբար ,մորթում էին, հոշոտում, կանանց բռնաբարում, աղջիկներ փախցնում: Սարսափահար բազմության մեջ կային և անգլիական սպաներ, որոնք հանգիստ մտիկ էին անում այդ սարսափներին»: «Ո՞վ է ասում, թե անգլիացիները չեն կոտորել տվել հայ ժողովրդին: Ով այդպիսի բան ասում է, նա սուտ է ասում»[10]:

1919 թ. հունիսյան գեհենն սկսվեց այսպես. Գեներալ Վ. Թոմսոնը վաղուց էր մրթմրթում Շուշիից արտաքսել հայ քաղաքական գործիչներին, որոնք դեմ էին Արցախը Ադրբեջանին բռնակցելուն: Եվ ահա հունիսի 2-ին գեներալ Շատելվորտի հրահանգով Բաքվից Շուշի եկած կապիտան Տաունզենդին, իր մոտ հրավիրելով մի խումբ հայ քաաքական գործիչների, նրանցից պահանջում էր ստորագրություն տալ, որ այլևս չեն զբաղվելու քաղաքական գործունեությամբ[11]: Անգլիական այդ ստոր քաղաքականության դեմ բողոքում է Ազգային Խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը՝ նշելով, որ անգլիական ներկայացուցիչները ,բռնանում են մեզ վրայ՝ Ադրբեջանի ապօրինի պահանջները բաւարարած լինելու համար…Մենք բնիկ ղարաբաղցիներ ենք, իսկ Ղարաբաղը հայ ժողովրդի սեփականությունն է, որ դուք ստորագրություն եք պահան-

ջում: Մենք բողոքում ենք, որովհետև պարոն գեներալի կարգադրութիւնը արդար, իրաւացի չէ և չի համապատասխանում ստեղծված իրական պայմաններին: Նա կապիտանին հիշեցնում է արցախահայության 5-րդ համագումարի կողմից գեներալ Շատելվորտին տված հատուկ պատասխանը, որ երբեք Արցախը չի ընդունի Ադրբեջանի իշխանությունը[12]:

Մինչ այդ՝ հունիսի 1-ին, գեն. Շատելվորտը հրամայել էր վերացնել քաղաքի հայկական և թրքական թաղամասերի միջև դիրքապահությունը: Այդ պարտականությունը դրվել էր Հնդկաստանից բերված սիպայիների վրա, որոնք, սակայն, բարեխղճորեն չկատարեցին իրենց անելիքը [13]:

Հունիսի 3-ի առավոտյան Շուշիում գտնվող անգլիական միսիայի գլխավոր Մոնկ Մեզոնը իր մոտ է կանչում Ասլան Շահնազարյանին և նրա տեղակալ Եղիշե Իշխանյանին հայտնում, թե այդ գիշեր գեն. Շատելվորտից հեռագիր է ստացել, որը պահանջում է պետական գանձարանի ունեցվածքը հայկական թաղամասից փոխադրել թրքական թաղամաս և հանձնել Սուլթանովին[14]:

Գանձարանը և փոստ-հեռագրատունը հայկական թաղամասից թրքական թաղամաս տեղափոխելը դժգոհություն է առաջ բերում քաղաքի հայերի շրջանում: Այդ ժամանակ իրադրությունը ավելի է սրվում: Սուլթանովի եղբայր, հայտնի ավազակապետ Սուլթանբեկը իր դահիճներով եկել և Շուշիից ներքև, Ղայբալի գետակի ձորում պատրաստ սպասում էր՝ եթե քաղաքում ,հայերը նեղեն, հարձակման անցնենք[15]: Ժամանակի մամուլը նաև հաղորդել է, որ թրքական թաղամասում աշխատանքի գնացած 50 հայերից 7 հոգի են կենդանի վերադարձել, մնացածին կոտորել են, որոնցից 24-ը եղել են թրքահայ գաղթականներ: Մինչդեռ միևնույն ժամանակ հայկական թաղամասում գտնվող երկու թրքի և ռեալականում սովորող բոլոր թուրք աշակերտներին տեղափոխել էին թրքական թաղամաս[16]:

Ըստ էության՝ Սուլթանովը անգլիական միսիայի հետ գալով համաձայնության, երբ հունիսի 4-ի առավոտյան սիպայիները հեռանում են զորանոց, թրքերը զինված իրենց թաղամասից շարժվում են դեպի Բաղունց հորերի թաղը: Մինչև այդ նրանք գրավել էին հայկական մի քանի դիրքեր, որոնք հայ կամավորական ջոկատները ետ էին վերցրել: Իմիջիայլոց՝ թրքերը Շուշիից հեռանալու ժամանակ մեծ քանակությամբ փամփուշտ և զենք էին թողել մահմեդականներին: Մինչդեռ հայերն ունեին ընդամենը 2700 փամփուշտ[17]:

Թուրքերի հարձակումից Բաղունց թաղը հանկարծակիի է գալիս: Երբ հնչում է ահազանգը, հայ ինքնապաշտպանական մարտիկները շտապում են մարտական գիծ: Հայկական վաշտը, որը բաղկացած էր 120 հոգուց, մտնում է Գեավուր Ղալայի թաղ: Երկու կողմերը դիրքեր են բռնում: Հայ մարտիկները հրահանգ էին ստացել խնայողաբար օգտագործել փամփուշտը: Մինչդեռ թուրքերը կրակում էին անխնա: Չնայած դրան, նրանք տալիս են 37 զոհ, իսկ հայերը՝ մեկ, մեկ հոգի էլ թեթև վիրավոր: Հայերին հաջողվում է գրավել Գեովհար աղայի տունը, որը մարտավարական նշանավոր կետ էր: Այստեղ զոհվում է ջոկատի հրամանատար Հակոբը, որի մահը մեծ ցավ է պատճառում բոլորին: Նրա դին ամփոփվում է եղբայրական գերեզմանատանը[18]:

Անգլիական միսիային ներկայանալով՝ թեմի առաջնորդ Վահան Տեր-Գրիգորյանը բողոք է ներկայացնում և պահանջում վերջ տալ այդ բարբարոսությանը: Սակայն գնդակոծությունը շարունակվում է 16 ժամ: Քաղաքի հայությունն ահ ու սարսափի մեջ էր: Հունիսի 5-ի վաղ առավոտյան անգլիական միսիային այլևս քաղաքականության չզբաղվելու վերաբերյալ ստորագրություն տված յոթ հոգուց երեքին՝ Եղիշե Իշխանյան, Հարություն Թումյան և Ասատուր Ավետիսյան, արտաքսում են քաղաքից: Սուլթա-

նովը, գրել է Հարություն Թումյանը, անցնում է ,տենդային գործունեությանե: Թուրքական թաղամասում տեղավորված ադրբեջանական զորամասերը ներխուժում են հայկական թաղամաս, գրավում զորանոցները, այնտեղից դուրս հանում արևմտահայ և Բերդաձորի փախստական ընտանիքներին: Եվ, այսպես, նահանգապետ Սուլթանովը անգլիական գազազած ,բուլդոգիե աջակցությամբ գրավում է հայկական թաղամասը՝ հեշտացնելով Արցախի հնազանդեցումը Ադրբեջանին[19]:

Սակայն հունիսյան սարսափները դեռ ետևում էր: Արցախի հնազանդեցումը՝ Շուշիին պետք է հաջորդեր նրա հարևանությամբ գտնվող հայկական բնակավայրերի ավերումներով: Առաջինը ցեղասպանության ենթարկվեց Ղայբալիշենը: Մակար Բարխուդարյանը գրել է. ,Ղայբալի գյուղ. Հիմնուած է Շուշու արևմտա-հիւսիսային հանդէպ, Գարգարի գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ. Բնակչիք բնիկ, հողն բէկական, լեռնային, անջրդի և սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն ցորեն, գարի գարնանի, հաճար, կորեկ, խաշխաշ (հազիւ է բաւականանում իւրեանց ուտելոյ), պատուական օդն, կլիման և ջուրն, երկար կեանք 90 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանայ երկու: Ծուխ 78, արբ. 320, իգ. 260ե[20]:

Դա եղել է 1895-ին: Դրանից հետո անցել էր 24 տարի: Աղբյուրներում ասված է, որ 1919 թ. գյուղը ունեցել է 140 ծուխ: Այստեղ հայերից բացի, ապրում էին նաև մահմեդականներ: Գյուղը ավերվելուց առաջ, զգուշացված մահմեդականների ընտանիքները հեռացել էին Խալիֆալու:

Ասվել է, որ հունիսի 5-ի նախօրյակին Սուլթանովի դահիճ եղբայրը իր ավազակային ջոկատով եկել և տեղավորվել էր Ղայբալիշենի մատույցներում: Սար բարձրացող քոչվոր-հորդաները կանգնած էին գյուղի հարավային կողմում Շուշի բարձրացող ճանապարհի մոտ, ,Սանդարե բլրի վրա տեղավորված էին Սուլթանովի դահիճները: Այսպիսով՝ Ղաբալիշենը երեք կողմից առնված էր շրջափակման մեջ: Ասենք, որ այդ օրերին Աղդամում աշխատող բոլոր հայ մշակներին, ինչպես նաև Խոջալուից Աղդամ՝ Կարկառ գետի վրա գտնվող ջրաղացներում գտնվող հայերին սրախողող էին արել[21]:

Նահանգապետ Սուլթանովի հրամանով՝ հունիսի 5-ի առավոտյան ժամը 10-ին բոլոր կողմերից հարձակում է սկսվում Ղայբալիշենի վրա: Սին ու սարսափը բռնել էր ամբողջ Ղայբալիի ծորը: Այդ զարհուրելի տեսարանը Սուլթանովի տան պատշգամբից հանգիստ դիտում էին անգլիացի դահիճները և ծխում: Այդպես է գրել ժամանակակիցներից Աբրամ Կիսիբեկյանը [22]: Ժամանակի մամուլի վկայությամբ՝ 50-ի չափ կանանց ու մանկահասակ աղջիկների դահիճները բերել էին քաղաք՝ իբրև նվեր նահանգապետին, որոնք Վահան եպիսկոպոսի միջնորդությամբ ազատվում են և հանձնվում հայերին[23]: Այդ նույն բարբարոսները 53 հոգու քշում են Խալիֆալու, բոլորին թալանում, հետո կիսամերկ վիճակում ետ բերում գյուղ ու մատուռի մոտ բոլորին գլխատում՝ իբրև զոհ են մատուցում աստծուն: Այդ խմբից երկու հոգի են փրկվում[24]:

Երբ գեհենը սկսվում է, կանայք ու երեխաները նեղ կիրճով իջնում են դեպի գետը: Երբ դուրս են գալիս բաց տարածություն, տեսնում են քաղաք տանող ճանապարհը փակել էին ասկյարներն ու թուրք խուժանը: Սարսափելի գնդակոծություն է տեղի ունենում ,Սանդարիցե: Խուճապի մատնված մարդիկ ետ են վերադառնում գյուղ: Ամեն ուր դիակներ էին, թափված արյուն: Գեհենը Ղայբալիշենը առել էր իր երախի մեջ: Ամբողջ օրը դահիճ քրդերը, ,Սանդարիե վանդալները և քոչվոր բարբարոսները հոշոտում էին գյուղը, անտառում ու քարերի արանքում թաքնվածներին հայտնաբերում ու սրախողող անում: Բնաջնջում էին ահ ու սարսափից մի բուռ դարձած մարդկանց: Ղայբալիի կիրճը և շրջակա անտառները մինչև հունիսի 20-ը դեռ պատած էին կանանց, երեխաների և ծերունիների դիակներով՝ ոմանք մորթված, ոմանք գնդակահարված: Աղբյուր-

ների վկայությամբ՝ կոտորածը շարունակվել է մինչև հունիսի 8-ը: Այդ օրը Խանքենդիից Աշիրեկ անունով մի սպա երկու ասկյարների հետ գալիս է գյուղ, հավաքում տարբեր տեղեր թաքնված 57 հոգու և տանում Խանքենդ: Ըստ աղբյուրների՝ սա միակ դեպքն է, որ մարդիկ փրկվել են մի սպայի նախաձեռնությամբ: Սուլթանովի հրամանով դիակները վառում են: Սակայն հունիսի 20-ի դրությամբ «տները լիքն էին ածխացած դիակներով և ոսկորներով»: Դիակները նետում էին նաև հորերն ու ջրհորները[26]:

Այդ իրողությունների կազմակերպիչներ անգլիական հրամանատարությունը և Ադրբեջանի բարբարոսները ամեն կերպ փորձում էին ծածկել իրենց կողմից կատարված ոճրագործությունը: Միայն անգլիական բանակի գնդապետ Գլատենբերգը գեն. Շատելվորին ներկայացրած զեկուցագրում պահանջում է հանցագործ Սուլթանովին դատի տալ[27]: Այդ օրերին՝ հունիսի 9-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը բողոքում է Անդրկովկասում անգլիական զորքերի գլխավոր հրամանատար գեն. Կորիին Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգության մասին: Վերջինս չի ժխտում, որ, իրոք, տեղի է ունեցել «անկարգություն» և երկու կողմից տուժել են 15 անձ, որոնց թվում սպանվել է մի անգլիացի զինվոր, երկուսը վիրավորվել են: Տեղի ունեցածը քննելու համար Կորին Արցախ է ուղարկում սպա Կիշբենին, իբրև նա «չափազանց մաքուր և անաչառ անձնավորություն է»[28]: Այդ լպիրշ գեներալի և նրա հանձնակատարի քայլերը մնացին անհետևանք: Ցույցեր և բողոքներ տեղի ունեցան Երևանում, Բաքվում, Թիֆլիսում, Սոչիում և այլ տեղեր, որոնց մասնակիցները պահանջում էին Արցախում ցեղասպանություն կազմակերպողներին պատասխանատվության ենթարկել:

Արցախում տեղի ունեցած ողբերգության հարցը, հայ պատգամավորների պահանջով քննարկվում է Ադրբեջանի խորհրդարանում: Հանձնաժողով է ստեղծվում հայ և թուրք պատգամավորներից, որն մեկնում է Արցախ, քննում տեղի ունեցածը և զեկուցում ներկայացնում խորհրդարանին, որը ընդունում է հանցագործությունները քողարկող այսպիսի որոշում. «Լսելով կառավարության զեկուցումը և բացատրութիւնը Ղարաբաղի անցքերի վերաբերմամբ և գտնելով, որ տեղական իշխանութեան և մասնաւորապէս ընդ. Նահանգապետի գործողութիւնների մեջ անօրինակնաութեան ոչ մի փաստ չկայ, պարլամենտը հաւանութիւն է տալիս այդ անցքերին վերջ տալու համար կառավարութեան ձեռք առած միջոցներին և անցնում է հերթական գործերին»[29]: Խորհրդարանի հայկական ֆրակցիան դեմ է քվեարկում այդ որոշմանը: Արցախ մեկնած խորհրդարանի պատվիրակության անդամներ Պ. Չուբարյանը և Իս. Խոջոյանը իրենց կազմած զեկուցագիրը ուղարկում են Երևան և Թիֆլիս, նաև հրատարակում ,Աշխատավորե թերթի հուլիսի վերջի և օգոստոսի սկզբի համարներում: Ղայբալիշենը ավերվելուց հետո, վայրագները իրենց վանդալիզմը շարունակել են Խնածախ, Փալուր, Ջամիլլու, Ղլիգբաշ գյուղերում, հարձակվել են Դաշուշեն և Քարին տակ գյուղի վրա, որտեղ ջարդ կրելով ետ են շպրտվել[30]: Վառել են Կրկժանի մոտ գտնվող Հարունյանի մետաքսագործարանը, ներխուժել են գյուղից ոչ հեռու գտնվող Աթաբեկյանի կալվածքն ու ջրաղացը, սպանել տիկին Նատալյա Աթաբեկյանին և նրա աղախնուն ու անհետացրել դիակները:

Այդ ցեղասպանությունից հետո Ղայբալիշենից կենդանի մնացած Արշակ Ենգիբարյանը, Միքայել Խաչատրյանը, Զումշուդ Հովսեփյանը, Արշակ Օհանջանյանը, Մելիք Միրզոյանը, Ասրի Մնացականյանը, Աղաջան Բալայանը, Ձհանգիր Սարգսյանը, Թադևոս Հարությունյանը, Առաքել Դանիելյանը, Գարեգին Տեր –Ղուկասյանը, Մայկո Սարգսյանը, Ռոհան Բարխուդարյանը և ուրիշներ բողոք են ուղարկել Սուլթանովին և անգլիական միսիային: «Ձեզ յայտնի,- գրել են նրանք,- զինուած յարձակման, մեր գիւղի աւերման, քայքայման, կործանումի, մեր գյուղացիների ամենաբարբարոս և գազանա-

յին կոտորածի մասնակիցները, ստորև հիշատակուած մահմեդականներ են, որոնց ողջ մնացած դայբալիշենցիները հանդիպել են յանցանքի տեղում ու ականատես են եղել նրանց չարագործութիւններին, որոնք տևել են երկու օր ու գիշեր՝ յունիսի 5-ին և 6-ին»[31]: Սակայն այդ բողոքը մնում է անհետևանք:

Ադրբեջանի լրատվամիջոցները, կառավարությունը, նրանց հովանավորող անգլիական հրամանատարությունը ջանում էին Արցախի հունիսյան գեհենի ամբողջ մեղքը բարդել արցախահայության վրա: Իբրև այդ ամենի պատճառը գանձարանը և փոստ-հեռագրատունը հայկական թաղամասից թրքական թաղամաս տեղափոխելն է եղել, որի համար Շուշիի հայերը դիմել են ապստամբության: Մինչդեռ հունիսյան գեհենը ոչ մի կապ չի ունեցել գանձարանն ու փոստ-հեռագրատունը տեղափոխելու հետ, [32] մանավանդ Դայբալիշենի ցեղասպանությունը: Դա ժխտում է նաև ինքը՝ դահիճ Սուլթանովը: Ահա թե նա ինչ է ասել. «Ես վճռեցի այնպիսի միջոցներ ձեռք առնել, որ հայ հասարակութեանն ու Ազգային Խորհրդին իմ իշխանութիւնը չճանաչելու անհնարութեան փաստի առաջ դնեմ. ես այստեղ իշխանութիւնն եմ….Ես ուզում էի վերացնել Ազգային Խորհուրդը և վերջ դնել այդ ամենին» [33]:

Նաև ասենք, որ Ադրբեջանի պատմագրությունը 1919 թ. Արցախում տեղի ունեցած ցեղասպանությունը ամոթաբար կամ ժխտում է, կամ էլ լիովին խեղաթյուրում, որը դատապարտելի է:

Այնուամենայնիվ Ադրբեջանի հանցագործները և անգլիական «բուլդոգները» ի՞նչու կատարեցին 1919 թ. հունիսյան ցեղասպանությունը.

1. *Սարսափի մեջ գցել քաղաքի հայ հասարակությունը:*
2. *Երկրամասի բնակչությանը ստիպել ընդունելու Ադրբեջանի իշխանությունը:*
3. *Բոլոր հայկական բնակավայրերը գինաթափ անել:*
4. *Փակել Շուշի-Գորիս ռազմավարական ճանապարհը:*
5. *Դյուրացնել քոչվորների սար բարձրանալը:*
6. *Լեռներում բնակվող քրդերը Դայբալու գյուղի հովտով և Խալիֆալու գյուղի վրայով Խանքենդ-Ասկերան-Աղդամ-Եվլախ ուղիով ազատ կապ ունենալ Բաքվի հետ: Այդ ճանապարհից Դայբալիշենի վերացումը Ղարաբաղի նահանգապետության քաղաքական ծրագրի մեջ էր մտնում:*
7. *Ամենահիմնականը՝ արցախահայությանը բնաջնջել և ամբողջ երկրամասը թրքացնել:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Աբրամ Կիսիբեկյան, Հուշեր 1, Եր., 2011, էջ 356:
2. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, g. 1, գ. 309, թ. 36-37:
3. Նույն տեղում, ֆ. 199, g. 1, գ. 38, թ. 27:
4. Արամայիս, Ղարաբաղի տագնապը, Եր., 1993, էջ 18:
5. Արտեմ Լալայանը Դիզակի զորահրամանատարն էր, Ասլանիկը՝ նրա տեղակալը:
6. Հարություն Թումյան, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920, Եր., 2008, էջ 225:
7. Հրանտ Աբրահամյան, Մարտնչող Արցախը, գիրք Ա, Եր., 2003, էջ 308, նաև В. А. Мурадян, Отец и отчим, Ереван, 1998, с. 39.
8. Աբրամ Կիսիբեկյան, նշվ. աշխ.,էջ 357:
9. Տե'ս Եղիշե Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Եր., 1999, էջ 453-454:

10. Լեո, Անցյալից, Եր., 2009, էջ 387, 388, 390, 391:
11. «Աշխատավոր», թ. 112, 08.06.1919:
12. Եղիշե Իշխանյան, նշվ. աշխ., էջ 429:
13. Նույն տեղում, էջ 425: Դիրքապահությունը Շուշիում մտցվել էր 1918 թ. գարնանը, երբ սրվել էին ազգամիջյան հարաբերությունները: Այն վերացվել էր թուրքերի Շուշի ներխուժելուց հետո: Մեկ էլ վերականգնվել է, երբ Սուլթանովը կարգվել էր նահանգապետ: Շուշիում շատերը լավ գիտեին Խոսրով բեկ Սուլթանովին, որը ծննդով Հաջի Սամլուի Փղանիս գյուղից էր: Ըստ էության՝ Սուլթանովի մայրը հայուհի է եղել, որին Խոսրովի հայրը իր ծառայի օգնությամբ առևանգել էր, երբ աղջիկը անտառում պտուղներ էր հավաքում: Իմիջայլոց՝ Աբդուլ Համիդի մայր էլ է հայուհի եղել, սուլթանի հարեմի հարսներից մեկը: Երակներում հայի արյուն եղած Աբդուլ Համիդը հանդիսացավ հայության դահիճը, որից ետ չմնաց Խոսրով բեկ Սուլթանովը (նույն տեղում, էջ 427):
14. Շուշիի գանձարանը բացվել էր վաղուց, ցարական ինքնավարության ժամանակ: Այն տեղավորված էր մեծահարուստ բաքաբնակ Ամիրջանյանների տանը, որը 1917 թ. աշնանից ի վեր դատարկ էր, գումար չէր մտնում: Գանձարանի ամբողջ իրեղենը պատկանում էին հայերին: Այդ գանձարանի նկատմամբ Ադրբեջանը ոչ մի իրավունք չուներ: Գանձարանի պետը ազգությամբ ռուս էր, վաթսունն անց մի բարի մարդ: Նա Ադրբեջանի կառավարության անունը լսել չէր ուզում, Սուլթանովին չէր ենթարկվում: Նա հրաժարվում է գանձարանի իրեղենը հանձնել Սուլթանովին՝ նշելով, որ գանձարանը պատկանում է Ռուսաստանի կառավարությանը: Գանձարանում աշխատողները հիմնականում ազգությամբ հայեր էին: Նրանք հրաժարվում են գնալ և աշխատել թրքական թաղամասում:
15. «Աշխատավոր», թ. 119, 17.06.1919:
16. Նույն տեղում, թ. 120, 18.06.1919:
17. Եղիշե Իշխանյան, նշվ. աշ., էջ 438:
18. Նույն տեղում, էջ 439:
19. Հարություն Թումյան, նշվ. աշխ., էջ 227-228:
20. Մակար Բարխուդարյան, Արցախ, Եր., 1996, էջ 98:
21. «Աշխատավոր», թ. 119, 17.06.1919:
22. Աբրամ Կիսարբեկյանը, նշ. աշխ., էջ 357-358:
23. «Աշխատավոր», թ. 120, 18.06.1919:
24. Նույն տեղում, թ. 150, 27.07.1919:
25. Նույն տեղում, նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 165: Ղայբալիշենի զոհերի թիվը այլ աղբյուրներում նշված է 588 հոգի: Ընդհանրապես հունիսյան այդ սարսափելի օրերին Սիմոն Վրացյանը զոհերի թիվը ցույց է տվել 580 (Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1998, էջ 337): Այլ աղբյուրներում այդ թիվը գործածված է 600, իսկ „Кавказские слова“ թերթը (01.07.1919 г.)՝ 530: Մինչդեռ, բոլոր տվյալներով, այն հասել է 800-ի:
26. «Աշխատավոր», թ. 129, 29.06.1919:
27. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 118:
28. «Աշխատավոր», թ. 148, 25.07.1919:
29. Նույն տեղում, թ. 153, 6.08.1919:
30. Նույն տեղում, թ. 152, 31.07.1919: Այդ ցուցակը բաղկացած է 60 հոգուց:
31. Նույն տեղում, թ. 153.06.08.1919:
32. Նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Արցախում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների շուրջ (1919 թ. հունիս)
Աբրահամյան Հրանտ

Նշված ժամանակաշրջանում Արցախում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին անդրադարձել են մի շարք հեղինակներ: Սակայն որոշ հարցեր մնացել են չլուսաբանված: Մեր կողմից կատարված նոր ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռել որոշ հարցեր լուսաբանելու նորովի և կատարելու ուղղումներ, առանձնապես Ղայբալիշինի բնակչությանը ցեղասպանության ենթարկելու և գյուղն ամբողջովին ոչնչացնելու հարցում: Ավերածությունների են ենթարկվել նաև Շուշիի շուրջը գտնվող հինգ բնակավայրեր: Այս ամենը կազմակերպել են Ադրբեջանի իշխանությունները՝ անգլիացի գաղութարարների համաձայնությամբ: Հայոց ցեղասպանության բոլոր դաժանությունները կրկնվել են Արցախում:

РЕЗЮМЕ
Обзор трагических происшествий в Арцахе (июнь 1919г.)
Грант Абрамян

Ключевые слова: *Арцах, стрельба, захватчик, депутат, съезд, блокада, военачальник, давить, показания, высылка.*

К трагическим происшествиям, происходящим в отмеченном временном периоде в Арцахе, обращался ряд авторов. Однако некоторые вопросы не были в центре внимания и не были освещены. Новые исследования, сделанные нами, дали возможность осветить некоторые вопросы по-новому и внести поправки в особенности в вопросе геноцида населения Кайбалишина и целостного уничтожения деревни. Кроме этого были разрушены пять населенных пунктов, которые находились вокруг Шуши. Все это было организовано азербайджанскими властями при согласии английских колонизаторов. Жестокость армянского геноцида повторилась в Арцахе.

SUMMARY
Tragic events in Artsakh (June, 1919)
Hrant Abrahamyan

Keywords: *Artsakh, shooting, invader, deputy, congress, blockade, commander, press, testimony, expulsion.*

Several authors have written about tragic events in Artsakh in the above-mentioned period of time, but several issues haven't been illuminated. New researches, which have been done by us, give a chance to illuminate several issues in a new way and to make corrections, especially in the issue of population genocide and elimination of Ghaylabishi. Five settlements around Shushi have also been eliminated. Those cruel actions have been organized by Azerbaijani authorities with the consent of English colonists. Abuse of Armenian genocide repeated in Artsakh.